Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 63

ք. Երևան **25.07.2019թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ մշակույթի 03/14.2/2183-19, ՀՀ բնապահպանության 4/02.2/40237-19, ՀՀ գյուղատնտեսության ԳՊ/ԱԲ-1/1756-19, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների 02/16.3/3116-19, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 05/14.1/5932-19 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության 22.1ՀԲ/[108792]-19, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 03/11.2/4269-2019, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ԼՄ/2831-19 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից **0.2 հա** գյուղատնտեսական արտադրական օբեկտների հողեր (կադաստրային ծածկագիր՝ 10-028-0012-0005) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակությոն:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ռ. Մինասյան